

ԿԿՈՒ

ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



Թիթ 29

ՅՈՒՆԻՍ Դ. 2019

Շատախի մէջ երիտասարդները Վարդավառի Շաբաթ երեկոյեան կը պատրասեն դէգեր, որոնցմէ մէկը պէտք էր միւսներէն աւելի մեծ ըլլար: Երեկոյեան կարգով կը վառէին դէգերը՝ սկսելով փոքրերէն, եւ այսպէս մինչեւ առաւօտ կրակը չէր մարեր: Ահա այդ վառող դէգերուն մէջ կը խորովէին խնձորները եւ կ'ուտէին: Լուսաբացին կը վառէին ամենէն մեծ դէգը, որուն շուրջ կը կատարուէին շուրջպարեր:

ՎԱՐՎԱՎԱՐ Է... ՎԱՐՎԱՎԱՐ

Վարդավառը շարժական տօն է: Անիկա կը նշուի Չատիկէն 98 օր ետք եւ կու գայ Յունիս 28-էն Օգոստոս 1-ի միջեւ: Հայաստանի որոշ շրջաններու մէջ Վարդավառը կը նշուի Յունիս 22-ի յաջորդող Կիրակին:

Ժամանակին Վարդավառը ուխտագնացութիւններու տօն էր, ամենէն աւելի սիրուած ուխտավայրը Մշոյ Սուրբ Կարապետի վանքն էր:


Վարդավառը կը զուգահիստի դաշտերուն մէջ հասունցած հացահատիկներու հաւաքին: Տօնին գրեթէ ամենուր հասկեր կը տանէին եկեղեցի՝ խնդրելով, որ դաշտերը կարկուտէն ու մարախէն անվնաս մնան:

Բասէնի մէջ, առաւօտեան եկեղեցիին խորանը կը զարդարուէր հազարաւոր ծաղիկներով եւ վարդի փունջերով: Ընդհանրացած սովորութիւն էր, որ մինչեւ Վարդավառ խնձոր չուտէին, այսպէս ըսուած՝ «խնձորի պաս» էր, տարուան առաջին խնձորը կ'ուտէին Վարդավառին, ինչպէս առաջին խաղողը կ'ուտէին Վերափոխման տօնին խաղողօրհներէն ետք:

Նախիջեւանի մէջ առտու կանուխ կիները թելերու վրայ ծաղիկներ, խնձոր, մանր վարունգ եւ վարդեր ամրացնելով խաչածէ կը կապէին երեխաներու կուրծքին եւ կը տանէին եկեղեցի:

Տերսիմի մէջ, Վարդավառը կը նշուէր Մնձուր լէրան քառասունի հասնող ակնաղբիւրներուն մօտ: Կերուխումով, մարգախաղերով, պար ու նուագով Մնձուրը կը թնդար:

Հայաստանի գրեթէ բոլոր շրջաններուն մէջ Վարդավառի տօնը կը յատկանշուէր ջուրի խաղերով, բայց նաեւ՝ աղաւնի թռցնելով, գիշերային խարոյկներ վառելով, ցորենի խուրձեր եւ միրգեր զոհաբերելով, ծաղիկներ նուիրաբերելով եւ զանազան մրցումներ կազմակերպելով:



Թիթը մԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒՌԱՆ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻԲԵՆԱՆ
ՆԿԱՐԱՇԱՐՈՒՄԵՑ՝ ՈՒՋՅԻ ԲԵՇՈՇԵՆԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԻՆՉ Է ԱՆԹԻՊԻՈԹԻԶԸ

Անթիպիոթիքը շատ զորաւոր դեղ մըն է: Անկա բաղկացած է մանրէ մը, որ կը փճացնէ ուրիշ մանրէներ, կամ արգելք կ'ըլլայ անոնց աճին:

Մանրէները ապրող էակներ են, որոնք կրնան մեր մարմնին օգտակար ըլլալ: Սակայն ուրիշ մանրէներ կրնան նաեւ վարակմանը յառաջացնել (ինչպէս՝ կոկորդի բորբոքում, ականջատապ...):

Անթիպիոթիքները ո՛չ մէկ ազդեցութիւն ունին ժահրի պատճառով յառաջացած հիւանդութիւններուն դէմ (ինչպէս հարբուխ, կրիփ...): Ժահրը մակաբոյծ մըն է, որ միշտ վնասակար է մեր մարմնին համար:

ԱՆԹԻՊԻՈԹԻԶՆԵՐ ԾՈՎԵՐՈՒՆ ԽՈՐԵՐԵՆ

Մարդիկ սկսած են շատ անթիպիոթիքներ առնել: Այս պատճառով այս դեղերուն ազդեցութիւնը ժամանակի ընթացքին կը տկարանայ: Հետեւաբար գիտնականները սկսած են նոր անթիպիոթիքներ փնտռել ծովերուն խորերը:

Իրլանտացի գիտնականներ Չիլիի ափերուն մօտ հետախուզեցին ծովերուն խորերը ընկղմած նաւերու մնացորդները: Անոնք յատուկ մարդամեքենայ մը իջեցուցին աւելի քան 8000 մէթր խորութեան՝ փնտռելու համար ընդծովեայ ապրող մանրէներու տեսակներ, նոր դեղեր պատրաստելու համար:

Այս ձեւով գիտնականները 3000 մէթր խորութեան վրայ գտած են սպունգներ, որոնք կը պարունակեն անծանօթ մանրէներ:


Տարրալուծարանին մէջ անոնք կը մարած են թէ այդ մանրէները կրնան յարձակիլ այլ մանրէներու վրայ: Հետեւաբար զանոնք կարելի է գործածել անթիպիոթիքներ պատրաստելու համար:

Գիտնականները պիտի փորձեն անոնց քիմիական բաղադրութիւնը գտնել՝ զանոնք վերարտադրելու համար:


Այս իրլանտացի մասնագետները կ'աշխատին «Ֆարմասի» կոչուած մեծ ծրագիրի մը ծիրին մէջ, որուն կը մասնակցին 14 երկիրներէ 24 տարրալուծարաններ:

Անոնք համար ապագայի անթիպիոթիքները կը գտնուին ծովերուն խորերը եւ որոնք կը ծածկեն մեր մոլորակին 70 առ հարիւրը:

Աւելի ճշգրիտ ըլլալու համար, անոնք կը գտնուին ամենէն խոր, ամենէն տաք եւ ամենէն պաղ (Արքթիք եւ Անթարքթիք) ովկիանոսներուն խորերը:



Կրնա՞ս գտնել երկու պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող ութ տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել պանակին հասցնող ճամբան:



Եթէ առաջարկած գոյներս գործածես, շատ գեղեցիկ ձիու մը պատկերը պիտի ունենաս:

- 1.- Բաց սրճագոյն
- 2.- Մուր սրճագոյն
- 3.- Սեւ
- 4.- Կարմիր
- 5.- Կանաչ

ՊՈՉԱՏ ԱՂՈՒԷՍԸ

Յովհաննես Թումանյան

Աղուետը կ'երթայ փերեզակին:

- Փերեզա՛կ, փերեզա՛կ, ուլո՛ւնք տուր, ուլուները տանիմ աղջկան տամ, աղջիկը ինձի կուժ տայ, կուժը տանիմ աղբիւրին տամ, աղբիւրը ինձի ջուր տայ, ջուրը տանիմ արտին տամ, արտը ինձի խոտ տայ, խոտը տանիմ կովուն տամ, կովը ինձի կաթ տայ, կաթը տանիմ պառաւին տամ, պառաւը ինձի պոչս տայ, կցեմ, կցմցեմ, երթամ, ընկերներուս հասնիմ, որպէսզի ինձի չըսեն՝ պոչա՛տ աղուետ, ո՛ր էիր: Փերեզակը կ'ըսէ.

- Տէ՛, գնա՛, ինձի համար հաւկի՛թ բեր:

Աղուետը կ'երթայ հաւուն:

- Հաւի՛կ, հաւի՛կ, հաւկի՛թ տուր, հաւկիթը տանիմ փերեզակին տամ, փերեզակը ինձի ուլուներ տայ, ուլուները տանիմ աղջկան տամ, աղջիկը ինձի կուժ տայ, կուժը տանիմ աղբիւրին տամ, աղբիւրը ինձի ջուր տայ, ջուրը տանիմ արտին տամ, արտը ինձի խոտ տայ, խոտը տանիմ կովուն տամ, կովը ինձի կաթ տայ, կաթը տանիմ պառաւին տամ, պառաւը ինձի պոչս տայ, կցեմ, կցմցեմ, երթամ ընկերներուս հասնիմ, որպէսզի ինձի չըսեն՝ պոչա՛տ աղուետ, ո՛ր էիր:

Հաւը կ'ըսէ.

- Տէ՛, գնա՛, ինձի համար ցորե՛ն բեր:

Աղուետը կ'երթայ հողագործին քով:

- Հողագո՛րծ, հողագո՛րծ, ցորե՛ն տուր ինձի, ցորենը տանիմ հաւուն տամ, հաւը ինձի հաւկիթ տայ, հաւկիթը տանիմ փերեզակին տամ, փերեզակը ինձի ուլուներ տայ, ուլուները տանիմ աղջկան տամ, աղջկը ինձի կուժ տայ, կուժը տանիմ աղբիւրին տամ, աղբիւրը ինձի ջուր տայ, ջուրը տանիմ արտին տամ, արտը ինձի խոտ տայ, խոտը տանիմ կովուն տամ, կովը ինձի կաթ տայ, կաթը տանիմ պառաւին տամ, պառաւը ինձի պոչս տայ, կցեմ կցմցեմ, երթամ ընկերներուս քով, որպէսզի ինձի չըսեն՝ պոչա՛տ աղուետ, ո՛ր էիր:

Հողագործը կը մեղքանայ աղուետին եւ ափ մը ցորեն կու տայ: Աղուետը ցորենը կը տանի հաւուն, հաւը հաւկիթ կու տայ, հաւկիթը կը տանի փերեզակին, փերեզակը ուլուներ կու տայ, ուլուները կը տանի աղջկան, աղջիկը կուժ կու տայ, կուժը կը տանի աղբիւրին, աղբիւրը ջուր կու տայ, ջուրը կը տանի արտին, արտը խոտ կու տայ, խոտը կը տանի կովուն, կովը կաթ կու տայ, կաթը կը տանի պառաւին, իսկ պառաւը պոչը կու տայ աղուետին, որ զայն կը կցէ, կը կցմցէ, կը վազէ, կը հեռանայ ու կը հասնի իր ընկերներուն:

(Վերջ)

Բառ

Փերեզակ- առօրեայ մանր առարկաներ ծախող



ՀԱՐՑԱՐԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՐԳԱՑՈՒՄ

1.- Քանի՞ տարիներ է ի վեր գոյություն ունի երկրագունդը:

- ա.- Մօտաւորապէս 460 տարի
- բ.- Մօտաւորապէս 4600 տարի
- գ.- Մօտաւորապէս 4.6 միլիոն տարի
- դ.- Մօտաւորապէս 4.6 միլիառ տարի

2.- Մեռեալ ծովուն ջուրը շատ աղի է:

- ա.- ճիշդ
- բ.- Սխալ

3.- Աշխարհի ամենէն մեծ երկիրն է...

- ա.- Քանադա
- բ.- Ռուսիա
- գ.- Չինաստան
- դ.- Պրագիլ

4.- Ո՞ր քաղաքը կոչուած է «Մեծ Խնձորը»:

- ա.- Թոքիօ
- բ.- Լոս Անճելըս
- գ.- Նիւ Եորք
- դ.- Ռիօ Տը Ժանէրօ

5.- Հարաւային Բելեռը անապատ մըն է:

- ա.- ճիշդ
- բ.- Սխալ

6.- Ի՞նչ կը պարունակէ Եւրոպական ֆուրթայոլի գնդակ մը:

- ա.- Փետուրներ
- բ.- Քարեր
- գ.- Ջուր
- դ.- Օդ

7.- Եւրոպական ֆուրթայոլի խաղին օրէքները դրուած են աւելի քան 100 տարի առաջ՝ Անգլիոյ մէջ:

- ա.- ճիշդ
- բ.- Սխալ

- 1.- Մօտաւորապէս 4.6 միլիոն տարի
- 2.- ճիշդ
- 3.- Ռուսիա
- 4.- Նիւ Եորք
- 5.- ճիշդ
- 6.- Օդ
- 7.- ճիշդ

ՎՊՈՒՄՈՒՄ

